ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Առաջնորդվելով ՀՀ կառավարությանն 2020թ. հունիսի 4-ի N 914-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից աճուրդային եղանակով, 23500 ՀՀ դրամ ամսական վարձավճարով մեկ տարի ժամկետով բացառությամբ հունիս, հուլիս, օգոստոս ամիսների վարձակալության է տրամադրվում ք. Երևան, Արտաշիսյան 52 հասցեում գտնվող «Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան հ.27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված շենքի նկուղային հարկից 35.66 ք.մ ընդհանուր մակերեսով տարածքը՝ շաբաթական հինգ օր երկուշաբթիից-ուրբաթ ժամը 09.00-13.00 սննդի կազմակերպման նպատակով (բուֆետ), որի վարձակալության համար հայտերը կարող եք ներկայացնել 2025 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել՝ 011-58-35-40 հեռախոսահամարով կամ դիմել քաղաք Երևան, Տիգրան Մեծի 4 հասցեով: